Հավելված 10

ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ ՏՀՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. բարդ և անծանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:

Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը: